

# MasterCard Standard Քարտի տրամադրման և սպասարկման սակագները

Ծառայության տեսակ	Սակագին
1. Քարտային հաշվի սպասարկման միջնորդավճար	6,000 ՀՀ դրամ տարեկան
2. Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
3. Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի գերաժախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք <sup>1</sup>	Առանց գրավային ապահովվածության՝ - ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 19.5%-21% <sup>2</sup> - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 17%-20% - Եվրո արժույթով քարտեր՝ 16%-19%  Գրավային ապահովվածությամբ՝ -ՀՀ դրամ արժույթով քարտեր՝ 18%-21% <sup>2</sup> - ԱՄՆ դոլար արժույթով քարտեր՝ 15%-18% - Եվրո արժույթով քարտեր՝ 14%-17%
4. Վարկային գծի օգտագործման անտոկոս ժամանակահատված (միայն վճարային գործարքների համար)	գործարքի ձևակերպման օրվանից մինչև հաջորդ ամսվա 7-րդ օրացուցային օրը
5. Ամսական պարտադիր մարումներ	10%
6. Լրացուցիչ քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	<ul style="list-style-type: none"> <li>American Express Cashback՝ 300 ՀՀ դրամ ամսական</li> <li>Visa Classic՝ 3,000 ՀՀ դրամ միանվագ</li> <li>ArCa «ՄԻՐ»՝ 2 000 ՀՀ դրամ միանվագ</li> </ul>
7. Կից քարտի սպասարկման միջնորդավճար (թողարկվում է հիմնական քարտի ժամկետով)	անվճար
8. Քարտային հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
9. Քարտի գործողության ժամկետ	3 տարի
10. Կանխիկ դրամի տրամադրում բանկոմատներում և կանխիկ տրամադրման կետերում՝	
• ԱՎԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ Բանկ	1%
• «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկեր	1%
• Այլ բանկեր Հայաստանում	1%
• Այլ բանկեր արտերկրում	1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ
11. Բանկի քարտային հաշիվների կանխիկ դրամի մուտքագրում բանկոմատների միջոցով	
• Բանկի բանկոմատներ	0%
• «Արմենիան Քարդ» համակարգի անդամ բանկերի բանկոմատներ	1%
12. Անկանխիկ վճարում քարտով	անվճար
13. Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>1,000,000 ՀՀ դրամ</li> <li>2,000 ԱՄՆ դոլար</li> <li>2,000 Եվրո</li> </ul>
14. Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ	5
15. Վճարային գործարքների օրական առավելագույն չափ	<ul style="list-style-type: none"> <li>1,000,000 ՀՀ դրամ</li> <li>2,000 ԱՄՆ դոլար</li> <li>2,000 Եվրո</li> </ul>
16. <a href="http://www.arca.am">http://www.arca.am</a> կայքի միջոցով քարտից քարտ փոխանցումներ <sup>3</sup>	0.5%
17. Բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումներ <sup>4</sup>	0.2%
18. SMS-տեղեկացում ծառայություն	15 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱՄՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)
19. Քարտի փոխարինում Քարտի կորստի, վնասման կամ PIN-կոդի կորստի դեպքում (Հայաստանում)	2,000 ՀՀ դրամ
20. USSD-տեղեկացում ծառայություն	10 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱՄՀ (գանձվում է յուրաքանչյուր հաղորդագրության դիմաց)

## Ծանուցումներ

Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով տարեկան տոկոսային եկամտաբերությունը բոլոր քարտերի համար կազմում է 0%:

ԱՎԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿԻՍ Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից» հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

- ✓ միայն դրամային ավանդների դեպքում - 10 մլն ՀՀ դրամ,
- ✓ միայն արտարժույթային ավանդների դեպքում - 5 մլն ՀՀ դրամ,
- ✓ և՛ դրամային (5 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում - միայն դրամային ավանդը՝ մինչև 10 մլն ՀՀ դրամի չափով,
- ✓ և՛ դրամային (5 միլիոնից պակաս), և՛ արտարժույթային ավանդների դեպքում - դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 5 մլն ՀՀ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերությամբ չափով:

Տոկոսագումարները հաշվարկվում են քարտային հաշվի մնացորդի նկատմամբ, օրական կտրվածքով, քարտի գործողության ողջ ժամկետի համար: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին կամ հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվարկված տոկոսագումարները վճարվում են քարտային հաշվի ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:  
Կանխիկ տրամադրման օրական առավելագույն չափը, մեկ գործարքի առավելագույն ասինանաչափը և կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակը կարող են անվճար փոփոխվել քարտապահի բանավոր հանձնարարությամբ:

## Սակագներում օգտագործված տերմինների մեկնաբանություն

- **Անտոկոս ժամանակահատված** - արտոնյալ ժամանակահատված, որի ընթացքում վճարային գործարքների կատարման համար քարտի վարկային միջոցների օգտագործած մասը քարտային հաշվին մուտք անելու դեպքում քարտապահը տոկոսագումարներ չի վճարում:

<sup>1</sup> Վարկային գծի չունեցող քարտերի գերաժախսի դիմաց գանձվող տարեկան տոկոսադրույք սահմանվում է տվյալ քարտատեսակի համար նախատեսված տոկոսադրույքի միջակայքի առավելագույն չափով:

<sup>2</sup> Անվճար երեք տարի ավել, վճարային քարտով վարկային գծի ունեցող հաճախորդների համար քարտի վերադարձված միջոցները հետո առանց գրավային ապահովվածության՝ 19-21

<sup>3</sup> Բանկի քարտերից կատարված քարտից քարտ փոխանցումները Արմենիան Քարդ համակարգի անդամ բանկերի քարտերին ACBA Online համակարգի կամ ACBA Mobile բջջային հավելվածի միջոցով՝

Բանկի ATM-ներում և POS-տերմինալներով կանխիկ տրամադրման համար սահմանված սակագներով:

<sup>4</sup> Բանկի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դիմաց գանձվող սպասարկող բանկի միջնորդավճար՝ 0.3%: Ընդ որում, Արմենիան Քարդ համակարգի անդամ բանկերի բանկոմատների միջոցով քարտից քարտ փոխանցումների դեպքում և կարող է կիրառվել Սպասարկող բանկի միջնորդավճար, որի չափը սահմանվում է տվյալ բանկում սպասարկող բանկի կողմից:

- **Ամսական պարտադիր մարումներ** - յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ օգտագործված վարկային գծի նշված տոկոսը ենթակա է վճարման այդ ամսվա ավարտից հետո 50 օրվա ընթացքում: Տվյալ ժամկետում նշված պարտավորությունը չկատարելու դեպքում քարտապանը պարտավորվում է բացի պարտադիր մարման ենթակա գումարից վճարել նաև տվյալ պահին քարտային հաշվի սպասարկման համար առաջացած դրամային պարտավորությունը, առաջացած գերածախսը և գերածախի նկատմամբ հաշվարկված տոկոսները:
- **Լրացուցիչ քարտ** - գործող քարտային հաշվին կցված այլ վճարային համակարգի քարտ: Լրացուցիչ քարտը հնարավորություն է տալիս Քարտապանին օգտագործել հիմնական քարտային հաշվին առկա միջոցները, եթե հիմնական քարտի հետ առաջացել են չնախատեսված խնդիրներ կամ այն չի սպասարկվում տվյալ առևտրի/սպասարկման կետի և/կամ բանկում/տեղում: Լրացուցիչ քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար՝ բացառությամբ լրացուցիչ American Express Cashback քարտի, որի սպասարկման վարձը գանձվում է ամսական սկզբունքով:
- **Կից քարտ** - գործող քարտային հաշվին կցված միևնույն վճարային համակարգի և տեսակի քարտ: Կից քարտը տրամադրվում է հիմնական քարտի քարտապանի կողմից նշված անձին և հնարավորություն է ընձեռում վերջինիս օգտագործել հիմնական քարտի հաշվին առկա միջոցները կից քարտի դիմումի մեջ նշված սահմանաչափերի շրջանակում: Ցանկացած տեսակի քարտի համար տրամադրվում է առավելագույնը 2 կից քարտ, բացառությամբ American Express Gold (առավելագույնը 4 կից քարտ) և ArCa Business ու Visa Business (անսահմանափակ քանակությամբ կից քարտեր) քարտատեսակների: Կից քարտի միջնորդավճարը գանձվում է միանվագ քարտի գործողության ողջ ժամկետի համար:
- **SMS-տեղեկացում** - քարտի դիմումի մեջ նշված հեռախոսահամարին քարտապանի քարտային հաշվի շարժի վերաբերյալ sms-հաղորդագրության ստացում: